

ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պ. Ս. ԲԵԿԻՐՅԱՆ

1. ԱՂԱԶԵԼ, ԱՂՈԹ(Ք), ԱՂԵՐՍ

Ընդունված է, որ աղաչել և աղօր(ք) նույնարժան բառեր են (ինչպես ծանաչել և ծանօր, ամաչել և ամօր): Պարզ է նաև, որ այդ բառերի արմատն է աղ-: Բայց որտեղից է գալիս այս աղ- արմատը:

Իմաստային զարգացման զուգահեռ երևույթները թույլ են տալիս այն կապելու նիւ. *alā „hallo!“ արմատի հետ¹: Հնիւ. արմատի բուն իմաստն է, ըստ երևույթին, «ձայն ածել, բղավել, աղաղակել»: Այդ նույն արմատին կարելի է կցել նաև հայ. աղաղակ (որ Աճառյանը վարանումով դնում է իբր բնաձայն բառ: Արմ. բառ., Ա, 116—117)², Վն. բրբ. ալալող «ղաղտնի խոսք մը ուրիշներուն հայտնող, թուլորեան, անղաղտնապահ, խաբարբղան» (ԲՎՈ. բառ., 49):

«Զայն ածել, աղաղակել» > «աղաչել, աղոթել» իմաստային զարգացման համար հմտ.

Мол- արմատը ռուսերենում հանդես է գալիս մի կողմից ВЫМОЛВИТЬ «ասել, արտասանել», МОЛВЬ «խոսք, խոսակցություն. համբավ» (МОЛВА «լուր. համբավ»), մյուս կողմից՝ МОЛИТЬ (УМОЛЯТЬ) «աղաչել, աղերսել, խնդրել», МОЛИТЬСЯ «աղոթել» բառերի մեջ:

Նհնդկ. kahnā «1. ասել, խոսել, արտասանել. 2. կոչել» — kahnā-sunnā (բառացի՝ «ասել—լսել») «1. համոզել. 2. խնդրել, խնդրարկել (ходатайствовать)»³, Լատ. oro «1. խոսել, ասել. 2. խնդրել, աղերսել»: Հուն. ἀρω «աղոթք. անեծք» և ἀρωξίζω «1. հնչել, շաչել. 2. ճանչալ, կրճատել» բառերը կազմված են միևնույն առարկայից՝ հուն. ἄρω «խնդրել» — ἄρωξω «ասել, խոսել», εὐαρωξαι «1. աղոթել. 2. զովբերել. 3. պարծենալ. 4. հպարտ հայտարարել», εὐαρωξαι «1. աղոթքով դիմել, աղոթել. 2. ցանկություն հայտնել. 3. պարծենկոտ հայտարարել. 4. պարծենալ, ինքն իրեն դովել. 5. (երդմամբ) հայտարարել, հավատացնել. 6. հայտարարել» (Двор., I, 715—716):

Այսպիսով, կարծեք թե համոզիչ է նիւ. *al-ā- արմատի հետ կապել հայ. աղաղակ կրկնականը և աղաչել⁴, աղօր(p)⁵ բառերը: Աղոթ(p) բառի մեջ -աթ (-օթ) ածանցի առկայությունը որոշակի է (*-aut, *-auti?). Ունենք նույն ածանցով այլ բառեր էլ՝ ծանաթ (ծանօթ), ամաթ (ամօթ):

¹ Արմատիս ժառանգներն են՝ հիբան. alalā(bhavant-) «առույդ լինել», հուն. ἀλάλα, ἀλάλαι «hallo, ուրախ», ἀλάλητος, ἀλάλητος «մարտի աղաղակ» (սրան նման է հուն. ελελεս «ոռիմի աղաղակ. ցավի աղաղակ, ճիչ»), լիտ. aluoti „hallo կանչել», դրա կողքին՝ aliōti «աղաղակից, աղմուկից խրտնել». հւլ. ole, բուլղ. olele (ձայնարկություն), թերեւ. նաև լիտ. nu-oldėti «հնչել», ulduoti «ճչալ, հեծել» (Pok., 29):

² Ակադ. Գր. Հափանցյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ (Ե., 1961, էջ 154) կարդում ենք. «... խեթ. allallā «կոչվա՞?? թերեւ. բնաձայնական բնույթի բառ է, նման հայոց աղաղակ բառին»:

³ Хинди-русский словарь, сост. В. М. Бескровный, под. ред. А. П. Баранникова, М., 1953, էջ 238:

⁴ И. Х. Дворецкий, Древнегреческо-русс. сл., I-II, М., 1958, I, էջ 227 (այսուհետև՝ Двор.):

⁵ Աճառյանը -աչ-ի -ա-ն համարում է ածական, -չ-ն՝ հոդակապ, իսկ Ա. Ա. Աբրահամյանը (Գրաբարի ձեռնարկ, Ե., 1964, էջ 102) -աչ- դիտում է իբրև բաղադրական ածանց:

⁶ Pok. (306) աղաւթ-թ (alavt'-k') ողր (olb) և ողոթ (olok') բառերի հետ հանում է նիւ. *el- || *ol- բնաձայն արմատից (Schallwurzel), որ անհավանական չէ: Բայց նա սրանց է կցում և աղմուկ (almuk) բառը, մինչդեռ ընդունված է այն կապել նիւ. *p|im- արմատի հետ:

Աղերս բառն էլ իր հիմնական իմաստով (աղաչանք, պաղատանք) կապվում է այս բառախմբի հետ: Բայց եթե բառաբանությունն է աղ-, ապա -ե րս-ը...

2. ԱՐԱՐԱԶԵԼ, ԱՐՈԹ

Աստվածի և տմբոյ նույն կարգի կազմություններ են, ինչ որ աղաչել և աղօր(ք): Ար-մատն է այս:

Որքան էլ տարօրինակ թվա, մենք հակված ենք այս ամ-ը նույնը համարելու բուն հայկական ամալ բայի բառատի հետ (<հնթ*am- լցնել>): Եվ ոչ ուռանց հիմքի: Լեզվական շատ փաստեր վկայում են, որ բառով, ամաչել սերտ աղերս ունի լցում և թափ(վ)ել հասկացությունների հետ: Մեր խոսակցական լեզվում երեսուրակվեց, Միսս րակվեց նշանակում են բառաչեցի, ամոթալի վիճակի մեջ ընկա, երեսի ջուր՝ բառով, պատիվ: Մի երկու բնորոշ օրինակ գրականություններից.

էլ մեր երեսին մնաց մի կաթիլ

Ամոթի սուրը չուր, որ բերան բանանք

(Միք. Նալբանդյան, «Մամիկոնյան մեծ վահանի պատասխանը»):

«Սրբա-նրա հացատանը Շահանը լուրեր էր որսում, և երբ խոսք էր ընկնում աղջիկ տալու և առնելու մասին, Սանգուխտին էր մտաբերում: Մի տեղ լինել, տեղացիներ երեսի ջրով, բեռը թեթեանար, մնացած երկուսի մասին մտածել» (Ա. Բակունց, «Աքարում»):

Բայց գուցե սրանք նոր փոխարկություններ են: Ամենևին էլ նոր չեն:

Հմտ. հուն. γείω, γείω, γείω «թափել», γένω «լվացման ջուր» — γένω «ամաչել, խղճահարվել, քաշվել, շփոթվել», αἰσχύνω «ամոթ, նախատինք. անպատվում. ամոթի դժգոհում, ամոթխածություն» և այլն (Двор., II, 1773, 1792 և I, 57):

Լատ. fundo (effundo) «հեղում, լնում, վաթեմ» — confundo «ածել, լցնել, լցնելով խառնել, շփոթել», բառով առնել, ամաչեցուցանել՝ confundi (կրավ.) «ամաչել, պատկառիլ» (confusio «խառնակումն, աղմուկ...» և «ամոթ»)*:

Պրս. رختان ab նշանակում է «1. ջուր. 2. պատիվ, արժանապատվություն...»: رختان rixtān «1. թափ(վ)ել, հոսել. 2. լցնել...», իսկ آب رختان ab rixtān (բառացի՝ «ջուր թափ(վ)ել»)՝ «անպատվել, անարգել. ամոթը, արժանապատվությունը կորցնել». ۱۱۱۱ «երես» (հանգես է դալիս բարգավազությունների մեջ) آبرو abru (բառացի՝ «երեսի ջուր») «պատիվ, արժանապատվություն» (> հայ. բրբ. արբու «ամոթ, ամոթխածություն»), آبرو رختان abru rixtān «պատվազուրկ անել»¹⁰ (բառացի՝ «երեսի ջուրը թափել»):

Աղերս բառի մյուս նշանակությունների մեջ նախնական (ձայն ածել) իմաստի հետ այս կամ այն չափով կապված են թվում՝ «աղաչական մեղմ (ձայն)», «ջատագոգություն» (Արմ. բառ., Ա, 137), ինչպես նաև՝ «հարարություն, կապ, առնչություն»: Վերջինի համար հմտ. համաձայն, ձայն-ձայնի տալ, համահնչյուն, հոս. согласный (համաձայն), созвучный (ներգաչնակ, համահնչյուն. համապատասխան):

Աստվածատուր ներսեսովիչ, Բաղդիրք Լատինացուց և հայոց..., հոտ, 1693, էջ 218, 174:

* А. М. Малинин, Латинско-русский словарь, М., 1952, էջ 132:

⁹ Jacobus Villotus, Dictionarium novum Latino-Armenium, Roma, 1714, էջ 154:

¹⁰ Проф. Б. В. Миллер, Персидско-русс. сл., М., 1953, էջ 1, 3 (այսուհետև՝ Миллер): Պրս. նշված բառերի համարյա նույն իմաստներն են հիշատակված նաև Գևորգ Դպիրի «Բառարան պարսկերեն...»-ում (Կ. Պոլիս, 1826, էջ 22: Այսուհետև՝ ԳԴ) և Vullers-ի մոտ, հատ. I, էջ 1 (Joannis Augusti Vullers Lexicon Persico-Latinum (Etymologicum), Bonnae ad Rhenum, tomus I, 1855, tomus II, 1864):

նհնդկ. pāni «1. քուր. 2. արտաթորություն (քրտինք, լորձ, թացություն և այլն)»
 3. փայլ. 4. պատիվ. 5. արիություն. 6. ինքնասիրություն», karnā «անել», իսկ pāni
 pāni karnā (բառացի՝ «ջուր ջուր անել»)՝ «սաստիկ տառաչեցնել», honā «լինել»— pāni
 pāni honā (բառացի՝ «ջուր ջուր լինել»)՝ «ամոթից այրվել»¹¹:

Ահա օրինակներ հնդեվրոպական շորս լեզուներից, որոնք ապացուցում են, որ հիշ-
 յալ փոխարևություններ եղակի չէ և նոր չէ:

Եվս մի օրինակ ոչ հնդեվրոպական լեզվից. արաբ. جَر faḷara «1. ճեղքել. 2. բը-
 խեցնել, հոսեցնել, դուրս թափել (ջուրը)» > «1. մեղանշել. 2. անառակություն անել»,

فاجر faḷer «1. ա) անարգ, մեղավոր. բ) արատավոր, անառակ, անամթ. 2. շնացող»¹²:

Բայց և այնպես, իմաստաբանական ինչ հիմք ունի («ջուրը» թափվել) > «ամաչել»
 փոխարևությունը: Դժվար է ճշգրիտ բացատրություն գտնել մի երևույթի համար, որը
 դարերի վաղեմություն ունի, կապված է հեռավոր մի ժամանակաշրջանի մտածելակերպի
 հետ: Կարելի է ենթադրել, որ իմաստային անցումը տեղի է ունեցել («երեսից» քրտինք
 թափվել)՝ ի վրայով (հմտ. բրունել «ամաչել», քրունեղնել «ամաչեցնել, խիստ հանդիմա-
 նել»): Փյունիքը տվեց վրաս «շատ ամաչեցի» և այլն:

3. ԱՌԱՏ

Դանիացի հնդեվրոպաբան Hjalmar Frisk-ը 1944 թ. Գյոտեբորգում լույս է ընծայել
 «Etyma armeniaca» («Հայկական ստուգարանություն») աշխատությունը, որի համառոտ
 շարադրանքը «Հանդես ամսօրյա»-ում (1954, էջ 431—439) թարգմանաբար տվել է Վիեն-
 նայի միաբանության անդամ հ. Պետրոս Տեր-Պողոսյանը:

Այստեղ Frisk-ը, ի թիվս այլ բառերի, տալիս է նաև հայ. ամոք «լի, հասուն (հասկ)»
 բառի զեղեցիկ ստուգարանությունը: Ամոք նա կապում է հնի. *sa- արմատի հետ, որ
 Pok.-ի բառարանում (Լջ 876) բացատրված է «կուշտ, հյուսթալի, հոծ (satt)» հագեցնել,
 կշտացնել, բավարարել (sättigen): Հայերենում, ինչպես և հունարենում, *sa- արմատը
 հանդես է գալիս -d- ածականով (*sad-). ամոք (հմտ. բորբոք), հուն. σάτ «հագ (ուրդ)»,
 որից αθή-φαγος «շատակեր. ցնազ ուտող», σάτος «խիտ, հոծ, առատ» (!), σάτος «լի, աճուն,
 հասուն, առոք (առատ, հոծ)»: Այլ լեզուներում նույն արմատը պահպանվել է -t- ածա-
 կանով (*sat-). լատ. satis «բավականին» (satio «կշտացնել, հագեցնել, բավարարել»),
 գոթ. saps, նբդ. satt, հիւլ. sāith, լիտ. so'tis «նույն նշ.» (անգլ. sate, satiate «կշտաց-
 նել», satisfy «բավարարել», ռուս. сытый) և այլն¹³:

Ահա ամոք բառի սույն վերլուծությունը նոր լույս է սփռում առաւ բառի ստու-
 գարանության վրա:

Արմ. բառ. (Ա, 301) տալիս է առաւ բառի հետևյալ իմաստները՝ «առատաձեռն,
 առատ-առատ բաշխող, բարեգործ», «անառատ, պայծառ (աչք)», «լի, հորդ, շատ», բոլորն
 էլ վկայված մեսրոպյան շրջանից,— և մեջ է բերում Հյուբշմանի ստուգարանությունը¹⁴.
 «պհլ. rāt «վեհանձն, բարեբարո», որի հետ նույնն են պրս. rāo «առատաձեռն, բաջ,
 Կորովի, մտացի», ղնգ. rātā «չնորհ», սանս. rāti- «առատասիրտ, բարեբարո», «բոլորը
 ծագում են rā «տալ, բաշխել, շնորհել» արմատից:

Այսպիսով, ըստ Հյուբշմանի առաւ գալիս է պհլ. rāt բառից՝ ու նախաձայնավորի
 հավելմամբ, մի բան, որ անհավանական չէր (հմտ. արագ, երագ < պհլ. -rao, արոյր <
 պհլ. roē)¹⁵: Բայց, այսուհանդերձ, սույն ստուգարանությունը լուրջ կասկածներ է հարու-
 ցում, որովհետեւ՝

¹¹ Хинди-русск. сл., էջ 651:

¹² Проф. Х. К. Баранов, Арабско-русский словарь, М., 1958. էջ 747 (այ-
 սուհետեւ՝ Баранов):

¹³ Ըստ երևույթին հենց Frisk-ի հիշյալ ստուգարանության վրա հիմնվելով է, որ
 Pok.-ն հնի. *sā-, *sə- արմատի տակ հիշում է հայ. ամոք բառը, բայց նա այստեղ է
 կցում և հաց, հացոյ (*sadio-), որ Մեյեն զնում էր իբր փոխառյալ իրանյանից (տես
 Արմ. բառ., Դ, 40—42):

¹⁴ Ինչպես վկայում է Աճառյանը (Արմ. բառ., Ա, 301), բառիս իրանյան ծագումը
 նշել է նախ ԳԴ, ապա՝ Բ. Պատկանյանը:

¹⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., 1940, էջ 245 (այ-
 սուհետեւ՝ ՀԳ):

ա) Նշված հնդկա-իրանյան լեզուներից ե ոչ մեկում, այդ թվում հնադույն սանսկրիտում, համապատասխան բառը չի, առաւ, շատ իմաստին չի մոտենում անդամ: Եվ դա հասկանալի է. որովհետեւ ԻՃՆ (վեհանձն, բարերար) իմաստային միանգամայն այլ ոլորտի է հարում (ԻՃ Ետալ, բաշխել, շնորհել):

բ) Իրանյան բառն ունի վերացական իմաստ, մինչդեռ հայերեն բառի նշանակութայններից մեկը (լի, հորդ) կոնկրետ է (մենք կաշատենք ապացուցել, որ դա բառի հենց նախնական՝ հիմնական, ղլխավոր նշանակությունն է): Պատմականորեն միանգամայն բնական ու բանական է «առատ» (կոնկրետ) > «առաաաձեռն, բարերար» (վերացական) իմաստային անցումը, բայց հակառակը՝ հաղիվ թե, մանավանդ խոր հնադարում: Տեղին է հիշեցնել Աճառյանի սրամիտ մի դիտողությունը առաքիլի բառի՝ «կտրիճ» > «բարեպաշտ» իմաստային զարգացման մասին. «Սա ամենալավ օրինակներից մեկն է իմաստաբանության մեջ՝ ցույց տալու համար թե արմատների իմաստը նախ նյութականն է, ապա միայն անցնում է բարոյականին ու վերացականին»¹⁶: Մեյեն էլ է վկայում. արմատի «ամենից կոնկրետ իմաստը, անտարակույս, ե ամենից հինն» է¹⁷:

Աճառյանը առաւ բառի «առատաձեռն, բարեզործ ևն» իմաստներն է առաջ հիշատակել բացահայտ նպատակ ունենալով այն ավելի մոտ կանգնեցնելու ճիշտ համարված ստուգարանությանը: Բայց և կեք բացենք ՆՀԲ-ն (1, 293) ե կտեսնենք, որ այնտեղ առաջին հերթին նշված է՝ «յորդ. յուրթի. լի. անպակաս. անպատճառ. բաղում. շատ. լաւ», ապա նոր, իբրեւ ուրույն իմաստով բառ (բայց ոչ ղլխարառ)՝ «առաւ առատաձեռն, աննախանձ բաշխող, բարի ե բարերար. բարեսէք»¹⁸: Ուրեմն իմաստների հերթագայությունն այստեղ պահպանված է հարազատ կերպով:

Մյուս կողմից, սույն բառի համարյա յուրր հիմնական նշանակություններն էլ վկայված են Աստվածաշնչում, ուստի հետաքրքրական կլինի մեջբերել այնտեղ նրա գործածության վիճակագրությունը¹⁸. առաւ գործ է ածված 14 անգամ, որից 7-ը՝ Ա իմաստով, 7-ը՝ Բ¹⁹ (սա նշանակում է, որ բառիմաստի փոփոխությունը շատ վաղ է տեղի ունեցել), իսկ ածանցյալ բառերի մեջ արդեն դերակշռում է Ա իմաստը. առաւազոյն (1 անգամ՝ Ա իմաստով), առաւաճալ (3 անգամ՝ Ա իմաստով), առաւապէս (6 անգամ՝ Ա իմաստով), առաւորիւ (11 անգամ, որից 9-ը՝ Ա, իսկ 2-ը՝ Բ իմաստով): Եվ նույնիսկ առաւաձեռն բառի մեջ (2 անգամ), որն ունի Բ իմաստը, նախնական նշանակության երանդն անտարակույս կա:

Այսպես, ուրեմն, մեր համոզմամբ, առաւ բառի նախնական իմաստն է Ա-ն, ե գրանով էլ նա հանդում է հնի. «առ- առմատին՝ կազմված առ- մասնիկով (առ-ի համառ հմտ. առաւաւաղ): Նրա իմաստային կապն էլ ամուր բառի հետ՝ ակնբախ է:

4. ԽՈՒՂ (ՄԱՌԱԽՈՒՂ)

Արմ. բառ.-ում (Դ, 648) զրված է. «ԽՈՒՂ արմատ անհայտ նշանակությամբ. գործածված է միայն մասնախուղ բառի մեջ...»: Ահա և մասնախուղ բառը. «Բարդված է մասնաժողով, մեղ... ե խաւ կամ խուլ բառերից. վերջինս անհայտ է. որովհետեւ ուրիշ տեղ չէ՝ գործածված» (Դ, 846):

Խուղ արմատ մենք ունենք, բայց «հյուղ, խրճիթ, խեղճ տնակ» նշանակությամբ: Եվ սա ծագում է հնի. *squ- (ծածկել) արմատի կրճատ՝ *cu- ձևից (լի ածականով): Հնի. բուն արմատն է *sque-, կրճատ՝ *ceu-. որ ցեղակից լեզուները պահել են «ծածկել», «մորթ, կաշի, փոկ», «կեղև», «պատյան», «տուն», հյուղակ, խրճիթ իմաստներով (տե՛ս Արմ. բառ., Գ, 646—647):

Այս նույն խուղ արմատն է ահա, որ առանձին ստացել է «հյուղ» իմաստը, իսկ իր նախնական (ծածկել) նշանակությունը պահել է մասնախուղ բարդություն մեջ²⁰. Եվ վեր-

¹⁶ Հայկականք է (ՀՄՄԻ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1950, № 12, էջ 93):

¹⁷ A. Meillet, Introduction..., 3ieme éd., Paris, 1912, էջ 375:

¹⁸ Տե՛ս Թ ա դ ե ո ս վ. Ա ս տ վ ա ծ ա տ ու ռ յ ա ն Ա ռ ա պ կ ե ռ ց ի, Համարարրառ ին և Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1893, էջ 163:

¹⁹ Ա և Բ ըստ ՆՀԲ-ի:

²⁰ Իր մի անտիպ աշխատության մեջ -խուղ այսպես է ստուգարանել և պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանը (անձնական):

թինս փաստորեն նշանակում է «միգաթածկ(ություն)», միգամած(ություն)»։ Բարդ բառի երկրորդ բաղադրիչի իմաստի խունացումից հետո (բայց > 11-րդ առաջ) է կազմվել մասնավորապես բառը։

5. ՄԻԻ, ՄԱՂԻԿ

Հայոց բառերի ստուգաբանությունը նվիրված մեր նախորդ հոդվածներում երկու անգամ անդրադարձել ենք Եիւ, Եիւղ և Ժիւ, Ժիւլ արմատներին²¹, ցույց տվել դրանց՝ միւս. նույն արմատի գուգահեռ ձևեր լինելը։ Այստեղ որ այն ժամանակ ձեռքի տակ չենք ունեցել Pok.-ի բառարանի նոր հրատարակությունը, այլապես դրանք (առաջին հերթին ծ նախահնչյունով տարբերակները) կկցեինք նախ. *σεί- և *σεί- արմատին որի հետևյալ երեք իմաստներն է նշում Pok.-ն «keimen (ծլել, բողբոջել)։ sich spalten (ձեղքվել, բաժանվել, ձաքել)։ aufblühen (փթթել, ծաղկել)»։

Ինքը Pok.-ն նախ. հիշյալ արմատից է բխեցնում հայ. cil (ծիղ), ciul (ծիւղ), cel (ծեղ) և օն-ciul (ըն-ծիւղ. իմա՝ ընծիւղ), առանց սակայն նշելու, որ այստեղ կա l (լ ղ) աճականը (որը պարզ կարելի է տեսնել նախ. *σεί-, *ցի- արմատը և նշված հայերեն բառերը համադրելիս)։ Ընդամենն հնդեվրոպական բոլոր լեզուներն էլ այն արմատը պահել են զանազան աճականներով. -l- (հրգ. kil, նրգ. Keil «սեպ»), -n- (գոթ. keinan «ծլել»), -m- (հրգ. chimo «ծիւ»)։ կարելի է ավելացնել նաև գերմ. Keim, նույն նշ.), -d- (լիտ. žydėti «ծաղկել»)։ Pok., 335—336)։

Այս բոլորից հետո կարելի է վստահորեն ասել, որ նախ. նույն արմատին է հանգում նաև հայ. Ժիւ «կտոր, պատռ (մանավանդ շորի)» և ներկայացնում է առանց ղ աճականի տարբերակը (նույնից ղ աճականով ունենք Ժիւղ և ընծիւղ *ընղ—ծիւղ²²)։ Միւս արմատից են ծվել, Ժվառել, Ժվառել (հոշոտել, պատռ-պատռ անել)։

Իսկ ծաղիկ բառը։ Այն մինչև այժմ ստուգաբանված չէ։ Եղել են դանդաղ մերժելի առաջարկություններ։ Ծիշտ է, վարանումով, բայց մինչև վերջերս էլ ենթադրելի են համարել այն կապել ծիծաղ բառի հետ²³։ Իսկ Ա. Ա. Աբրահամյանը իր «Գրաբարի ձեռնարկ»-ում (էջ 33, ծան.), -յվ. -ուկ փոքրացուցիչ-փաղաքշական ածանց ունեցող և Ա ներդրական հոլովման պատկանող բառերի թվում հիշատակելով և ծաղիկ բառը, միաժամանակ նշում է. «Գծվար է ասել, թե ծաղիկ բառում -իւ-ն երբեմնի ածանց է, քանի որ առայժմ բառի ծագումն անհայտ է»։

Արդ, այն հանգամանքը, որ ծաղիկ տեղ է գրավում -իկ. -ուկ ածանց ունեցող և Ա ներդրական հոլովման պատկանող բոլորի շարքում, որոշ չափով կարող է վկայել, որ -իկ-ը հին հայերենում գիտակցվել է իրեն ածանց։ Մյուս կողմից, ծաղիկ, ծաղկաց (ի—Ա հոլ.), ծաղկոյ, ծաղկոյ (II հոլ.) ցույց են տալիս, որ այդ -իկ-ի, իրեն ածանցի. գիտակցումը խունացել է (մինչև հնդեվրոպական շրջանում, ոչ ուշ)։

Եվ իրոք, եթե ծաղիկ բառը համադրենք վերևում հիշված Ժիւ, Ժիւ և մյուս բառերի հետ, կտեսնենք, որ նրա ծաղ- մասը, ծագումնաբանորեն, թե՛ իմաստով և թե՛, ինչպես ցույց կտրվի ստորև, ձևով միանգամայն նույնանում է նրանց հետ և ներկայացնում նրանց մի ձայնգարձը։

Ինչպե՞ս։ Հայտնի է, որ «հնդեվրոպական ձևերը (արմատներ, հիմքակաղմ ածանցներ, վերջավորություններ) կարող էին հանդես գալ ձայնավորման 3 հիմնական տեսակներով. *e (*э), *o (*о), — (զրո)։ Սրանք պայմանականորեն կոչվում են հերթա-դադարյան (ձայնդարձի) վերին, միջին և ստորին աստիճաններ²⁴։

Հին հայերենը հնդեվրոպական հիմք լեզվից ժառանգություն է ստացել ձայնորդների այս համակարգը և լայնորեն օգտագործել բառակազմության (ու թերությունների) մեջ։

²¹ Տե՛ս «Ստուգաբանական վերլուծություններ» (ՀՄՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիմ.), 1956, № 7, էջ 43—47) և «Մի քանի ստուգաբանություններ» («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 143—144)։

²² «Բաժանվել» > «ծլել, ծաղկել. հյուղ» իմաստային զարգացման մասին տե՛ս արդեն հիշատակված մեր հոդվածները, մասնավորապես առաջինը։

²³ Տե՛ս Georg Renatus Solta, Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Վիեննա, 1960, էջ 423, ծան.։

²⁴ Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխեմներ և նրա ծագումը, Ե. 1959, էջ 161։

հայերենում ունենք բազմաթիվ բառեր, որոնք ներկայացնում են հնդեվրոպական արմատ-ներն այս կամ այն ձայնդարձք:

Բայց հին հայերենն իր համար ստեղծել է «հայկական ձայնդարձների» ուրույն, ավելի ընդարձակ մի համակարգ, որի զուգահեռները միշտ չէ, որ գտնում ենք (և սկստք է փնտրենք) հնդեվրոպական ենթադրվող նախաձևի կամ քույր լեզուների մեջ: Համեմատենք հետևյալ աղյուսակը (մեծատառերով արվում են ներկա հոգվածում ստուգաբանվողները):

Հին հայերենի ձայնդարձների համակարգը

*e, *ɛ — ե, լ	(*i — ի)	*o, *ɔ — ո, ու, ոյ	a, (դրո) — ա
խեթ, խէթ	խիթ	խոթ, խոյթ, խութ	խաւթ, խայթ
լիզ	լիւզ	լոզ, լոյզ, լու(ա)լ	լուզ լաւզ
լեզ	լիւզ	լոզ, լոյզ, —	լուզ լաւզ
շիզ	շիւզ, շիւզ, շիւզ	(ն)շոզ, (ն)շոյլ	
ցիլ, ցեղ	ցիւ (ցուիթ)	ցոլ, ցոզ(ուէն)	ցալ(բ), ցաւզ(ուէն)
	քիւ	Քոլ(իկ), քոզ, Քոլ(Տիկ)	քաւզ
հեզ	հիզ, հիւզ	հոլ(իկ), հուզ, խուզ	
ճեզ(բ)	ճիզ(եկ), ճիւ, ճու	ճոզ	ճազ, ճաք (*ճազք) ²⁵
	ճիւզ		
ծեզ	ծիւ, ծիւզ (*ընդ-ծիւզ)		Ծալ(իկ)
	ծիլ, ծիզ(օտ, — իկ)		

Ահա թե հին հայերենի ձայնդարձների՝ հնդեվրոպական հիմք լեզվից անկախ դարձած այս համակարգի մեջ որտեղ է գտնվում բուն հայկական ծուլ- արմատը, թեև նրա համապատասխան նախաձևը (g) չենք գտնում (և կգտնենք արդյոք) Pok.-ի հայտնի բառարանում:

Այսպիսով, ծուլիկ կապվում է հնի. արմատի դիմաց նշված իմաստներից երրորդի հետ (aufblühen, փթթել, ծաղկել), շատ մոտ է կանգնած ծլլ (ծլլ) բառին: ՆՆՖ բառիս դիմաց այդպես էլ գրում է. «... ծնունդ բուսոց, որպէս և տնկոց՝ նախ քան ցայտուղն կամ դսերմն...» (1, 1001): Բացի դրանից, ծաղիկ երկրորդարար նշանակում է «զինու մար, զինու երեսի բորբոս. բորբոս», իմաստով նույնն է ծլլ «մզլել, բորբոսնել»:

Իսկ կազմության համար հիմտ. ծիզ—ծլլիկ, ծլուկ:

6. ՀՐՈՍ, ՀՐՈՍԱԿ

Ավանդված են մեծքույրյան շրջանից: Հիմնական իմաստները՝ «ասպատակող զորք», «աղջիկ փախցնելու ժամանակ առևանգողին օգնական կտրիճը» (տե՛ս Արմ. Բառ., Դ, 442—444):

Բառակազմի նր- հնչյունախումբը և նրուսակ բառի -ակ վերջնամասնիկը մղում են բառը դնելու իրեն իրանյան փոխառություն՝ պահլավական շրջանից (պհլ. fr- > հայ. նր- = fravardak > նրովարուսկ. a-frōsak > հունար. և այլն²⁶): Ահա թե ինչու Աճառյանը (անդ, 317 և 318) հրոսակ՝ բառը հիշատակում է ի թիվս այն բառերի, «որոնք զուտ իրանական փոխառություն են, թեև փաստորեն կարելի չէ ապացուցել այդ, բանի որ նրանց համապատասխանը չի գտնվում որևէ իրանական լեզվի մեջ»:

Իսկ նրու(ակ) բառը այս տեսակետից մյուսների համեմատությամբ ղեռ ավելի «բախտավոր» է, որովհետև նրա հիմար, եթե ոչ ուղղակի, ապա զոնե անուղղակի, բայց և այնպես հավաստի վկայություններ կան:

Պարսկերենի՝ մեր ձևերի տակ գտնվող շատ բառարաններ, այդ թվում և հայերեններ, հիշատակում են 𐭠𐭡𐭣𐭥 faras բառը՝ «ձի, մատակ» նշանակությամբ: Սրանք բա-

²⁵ ձաք բառի ստուգաբանությունը տե՛ս Ա. Ա. Արբա համայն, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Ե., 1962, էջ 145—146:

²⁶ Տե՛ս ՀԼՊ, I, 268—269:

²⁷ Տե՛ս «Հանրագիտարան կամ Նաֆիսի բառարան» (պարսկերեն), 3 հատորով, Թեհրան, 1938—1955, հատ. 4, էջ 2540: Vulliers, II, էջ 657: Миллер, էջ 367: Գաբելուն քառ. Կիրակոսյան, Պարսկերեն—հայերեն բառարան, Զուգա—Սպահան, 1933, էջ 429:

ոխ հոգնակին ղնում են (افراس afrās, բայց Vullers-ը հիշում է նաև սիրիական լեզվի (այստեղ իմա՝ արամեերենի) (فروس furus ձևը (!):

Այս ամենից բխում է, որ պահլավերեն չափանդված բառը պետք է ունենար *frosak, նույնիսկ *frasak²⁸ (կամ *farsak) ձևը ու նշանակեր «ձիավարող» (պհլ. -θk ածանցը հաճախ ցույց է տալիս զործողություն կատարող անձ. հմմտ. *nivēθak > ցուրակ «ղեսպան»։ ՀՀԳ, I, 276)։

Պահլավերեն ենթադրվող բառի նշանակալի կողմի ճշտմանը մեծապես կարող է նպաստել համեմատությունը արաբերենի հետ, որից فارس faras բառը փոխառյալ են համարում պարսկերենի վերոհիշյալ բառարանները²⁹։

Արաբերենն ունի فارس faras (հոգն. افراس afrās) «ձի, մատակ», որից فارس furs (!), فارس fares (հոգն. فارسان farsān կամ فوارس fauāres) «1. հեծյալ (!). 2. ասպետ, հերոս», فروسا furusa կամ فروسييا furusiya «ձիավարություն» (Баранов, 755—756)։

Այսպիսով, հրոսակ բառի ու-ի օգտին են խոսում և՛ Vullers-ի հիշառակած فروس furus հոգնակի ձևը, և՛ արաբերեն մեջբերված բառերի u-ով տարբերակները։

Բայց հայերեն հրոս, հրոսակ չեն նշանակում պարզապես «ձիավոր», այլ «ասպետակող զորք»՝ սկզբում ընդհանուր, ապա և բացասական առումներով (Առձեռն բառ. հրոսակ բառի դիմաց նշում է. «1. զորք. 2. վրայ վազող», էջ 513—514)։

Բացասական իմաստի զարգացման համար հմմտ. պրս. فارسا farsa «մաշող, ավերող», որ فرسودا farsudān (մաշել, ավերել) բայի ներկայի հիմքն է՝ ենթակայական զերբայի իմաստով։ Vullers-ի մոտ (II, 636) բերված է և فراس نيهان faras nihadan կապակցությունը, որ նշանակում է «հաղթել, հնազանդեցնել» (բառացի՝ «ձիուց զցել»)։ կրավորական իմաստով՝ «պարտվել, անկարող դարձվել»։

Արաբերենն էլ ունի فارسا farasa «հաղթել», որից همفارس multares «զինատիչ, արյունարբու»։

Հայ. ասպատակ (1. ձիով արշավանք կամ հարձակում. 2. ձիով արշավող, հարձակվող) դալիս է իրան. *aspataka = պհլ. *aspatak (ձիով արշավանք, ասպատակություն) բառից, որ կազմված է asp «ձի» և tak «վազել» մասերից (Արմ. բառ., II, 553—554)։ Իսկ այժմ ասպատակել ասպատակել ունեն բացասական իմաստ (ինչպես որ հրոսակ)։

Այսպես ուրեմն. հայ. հրոս և հրոսակ³⁰ փոխառություն են իրանական լեզվից. ամենայն հավանականությամբ՝ պահլավերենից, որի ունեցած ննադույն ձևը չի ավանդված, բայց հավաստվում է պրս. فارس faras (ձի, մատակ) և فارسا farsa (մաշող, ավերող) բառերի գոյությամբ։ Պետք է ենթադրել, որ հայերենում հրոսակ-ի աղղեցությունը է, որ հրոս բառն էլ զործ է ածվել նույն նշանակությամբ (ոչ թե «ձի», այլ «ձիավոր» > «ձիավոր զորք, ասպատակող զորք»)։

²⁸ Պհլ. fra- > հայ. հրոս- անցման համար հմմտ. fravartak > հրովարտակ (ՀՀԳ, I, 269)։

²⁹ 'Ի' ունի՝ «Ֆիրսան (պետք է լիներ ֆուրսան) فرسان (բառ արեպի) հեծեալ, կամ ձիավոր...» (էջ 708)։

Իրանագետների քննությանն ենթ թողնում ննադույն շրջանում պարսկերենի՝ սեմական լեզուներից կատարած փոխառությունների հարցը։ Մի բան պարզ է սակայն, որ հայ. հրոս(ակ) անմիջապես արաբերենից փոխառյալ լինել չէր կարող։

³⁰ Ահառյանը վկայում է. «Նույն բառն է հրափոսակ «ղեսպան կամ նամակ» (Բառ. Երեմ.)», Արմ. բառ. 'Ի, 443։ Այս իմաստի համար հմմտ. պրս. فرستادن farastādān «ուղարկել» (Vullers, II, 657, Կիրակոսյան, 429), فارس feres կամ فرست ferest «առարում. ուղերձ, նամակ. ղեղեցիկ իր. ընծա» (Vullers, II, 657)։

7. ՄՈՒՍԱՅԻՊ

Այս բառի մասին Արմ. բառ.-ում ասված է. «... մի տեսակ հաճիք». գործածված է Անիի անթվական մի արձանագրության մեջ...» (Դ, 1170)՝

Elias-ի անգլերեն-հայերեն բառարանում, free (ազատ) բառի դիմաց, ի միջի այ-
լոց, գտնում ենք և ܒܠܝܐ sâ'eb բառը³¹, Այս ածականը ենթադրում է ܒܠܝܐ sa'aba
«ազատել, փրկել» բայը և ܒܠܝܐ musâ'eb «ազատող, փրկող» բայանունը: Այստեղից
մինչև «փրկազնող, փրկանք», ինչպես ասում են, «մի բայ է»: Ապացույց՝ արար. ܚܪܪ hurr
«ազատ» (Elias, 283) — ܚܪܪ harrara „to set at liberty, ազատել, ազատ արձակել» (404) —

ܡܚܪܪ muharrer „ransomer, փրկազնող» (597. բառացի՝ «ազատող, փրկող»): Կամ՝ ܢܩܕܐ na-
qada «փրկել, ազատ(ագր)ել» բայից կաղմված ունենք ܢܩܕܐ munqed, որ Баранов-ը բա-
ցատրում է «спаситель, избавитель, փրկող, ազատ(ագր)ող» (1048), իսկ Elias-ը՝ «ranso-
mer, փրկազնող» (597): Հմմտ. նաև՝ ܐܬܕܐ iftādā «փրկանք» — ܡܘܬܐ mufted «փրկա-
զնող» (Elias, 597):

Այսպիսով, մուսայիպ ստուգաբանորեն նշանակում է «փրկության միջոց՝ փրկազին, փրկանք»:

Այժմ տեսնենք, թե կապակցության մեջ հարմարվում է բառի հիշյալ իմաստը: Ար-
ձանագրության տեքստի՝ խնդրո առարկա հատվածն այս է. «... և խորհուրդ բարի ծագեց
ի սիրտս պարոնացն Գրի(ղորի) և Յով(աննիսի). որ դքադաքս մեր նորողել շինեցին և
դամենայն հարկապահանջութիւն բարձին դմ... և ղթադառ, զհեծել, զգսփշուռն. զախորթա-
մարն և զգոնագիրն ի բաժ ի դադմս և ի մուսայիպն դարձուցին և զաթոռին հարկն որ
յետո ի չարաց դրած էր, զկապալն յեպիսկոպոսէն բարձին...»³²:

Այստեղ պարզորոշ էրպով խոսվում է պարոնայք Գրիղորի և Հովհաննեսի կողմից
«ամենայն հարկապահանջության» վերացման և որոշ հարկեր (թադառ և այլն) բաժի,
դադմի և մուսայիպի վերածելու կամ բաժով, դադով ու մուսայիպով փոխարինելու մասին:

Այստեղ մուսայիպ կարող ենք հասկանալ և՛ իրրե հարկի մի անհայտ տեսակ (ինչ-
պես զրել է Աճառյանը), և՛ իրրե իշխանություններին մուծվող փրկազին, փրկանք (եղևե-
լով բառի ստուգաբանությունից, թեև պարտադիր չէր, որ փոխառյալ բառը մեր լեզվում
պահեր իր ստուգաբանական իմաստը, մասնավորապես որ խոսքը վերաբերում է իրավական
օտարամույթ ինստիտուտի անվան):

8. ՔՈՒԼԻ, ՔՈՂՏԻ

Սրանք չկան ՆՀԲ-ում, Առձեռն բառ.-ում և Արմ. բառ.-ում, որովհետև մեր մատե-
նագրության մեջ չեն ավանդված, ուստի և գիտված են իրրե բարբառային: Գվռ. բառ. (էջ
1120) իրրե առանձին բառեր (և առանց ստուգաբանական նշումների) տալիս է՝ քուլիկ
Այս լեռներու մեջ շինված հյուղա, քուլընկեր Ղզ. հովիթներու լեռան բնկերը, որսնք միա-
սին կ'արածեցնեն հոտը, քուլիկ զլուխ Մշկ. կանանց հատուկ զխանոց (!) մ'է՝ խեժավոր
թաղիք և կարծր կտավե բաղկացած:

Մլխս. բառ. (4, էջ 583) ունի նույն բառերը համարյա նույն բացատրություններով:
Միայն թե այստեղ նա բրբ. քուլտիկ բառը հանում է պրս. کوخ (տնակ) բառից, որ հա-
ղիվ թե ճիշտ լինի, որովհետև քուլտիկ նույն քուլտիկ բառն է, որտեղ տ խուլ հնչյունի
աղղեցությամբ դ ձայնը խլացել է (ճիշտ այնպես, ինչպես որ այժմ շատերն արտասա-
նում են «կեխտ», «պխտոր» և այլն),

Քուլիկ և քուլտիկ բառերի արմատներն են քու- և քուղ-, հանդում են հնիս. *squeu-
(ծածկել) արմատի՝ s նախահնչյունից զուրկ տարբերակին (*queu-): Այս նույն արմատից

³¹ Elias' Modern Dictionary English-Arabic, 10-th ed., Cairo (1958), էջ 283.

³² Վիմակառ տարեգիր (Յուզակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց), կաղմեաց
Վ. Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913, Յաւելում, էջ 221:

են ծագում և իմաստային նույնպիսի զարգացում են ցույց տալիս նաև հայ. խուղ և խուղ բառերը (երկուսն էլ նշանակում են «տնակ, խրճիթ»)՝ 33. Քոլիկ նույնպիսի կազմում թյուն է, ինչ որ բրբ. հոլիկ (ունի Գվո. բառ., էջ 665): Քոլիկ բառի նախնական իմաստը (ծածկոց) պահպանվել է Մշկ. բոլիկ գլուխ հարադրություն մեջ (տե՛ս վերը):

Ինչ վերաբերում է քոլտիկ բառին, ապա այստեղ պարզապես զործ ունենք -ա- ածականի հետ: Իմաստի և կազմության համար հմտ. հնթ. *vol-, *wol- > հայ., ի միջի այլոց, գող-ու-իկ (իրբ բրբ. հիշատակում է Մխս. բառ., 1, 457) պահարան կամ մատան՝ հաց և ուրիշ ուտելիքներ պահելու:

Այսպիսով, բարբառային քոլիկ և քոլտիկ բառերը նույնարմատ են լինում բուն հայկական բոլ, քոլ, բիւ... բառերի հետ՝ 34.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Ալշ.— Ալաշկերտի բարբառ:

Առձեռն բառ.— Առձեռն բառարան հայերէն լեզուի, Վիեննա, 1865:

Արմ. բառ.— Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառաբան, հ. հ. Ա—Է, Երևան, 1926—35:

Բառ. Երևմ.— Բառգիրք հայոց... Երևմիայ վարդապետէ, Հալիկոռնա, 1698 (Արմ. բառ., հ. է, էջ 61):

Բրբ.— բարբառային:

Բուլղ.— բուլղարերեն:

Գվո. բառ.— Հր. Աճառյան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

Երև. բրբ.— Երևանի բարբառ:

Զթ.— Զեյթունի բարբառ:

Իրան.— իրանյան լեզու(ներ):

Լեթթ.— լեթթերեն:

Լիտ.— լիտվաներեն:

Խեթ.— խեթերեն:

Քն.— Քիանի խոսվածք:

Կրավ.— կրավորական:

Հրդ.— հին բարձր գերմաներեն:

Հիւլ.— հին իռանդերեն:

Հիրան.— հին իրանյան լեզու:

Հնթ.— հնդհվրոպական նախալեզու = հընդ-և վրոպական հիմք-լեզու:

Հշվեդ.— հին շվեդերեն:

Հսլ.— հին սլավոներեն:

Ղդ.— Ղազախի խոսվածք:

Մխս. բառ.— Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. հ. 1—4, Երևան, 1914—45:

Մշկ.— Մաշկերտի խոսվածք:

Նրդ.— նոր բարձր գերմաներեն:

ՆՀԲ.— Նոր բառգիրք հայկադյան լեզուի, հ. հ. Ա—Բ, Վենետիկ, 1836—37:

Ննդկ.— նոր հնդկերեն:

Ննթ.— Նոր-Նախիջևանի բարբառ:

Նորվ.— նորվեգերեն:

Pok.— Julius Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch. I Band, Bern, 1959.

Սանս.— սանսկրիտ:

Վն.— վանի բարբառ:

33 Տե՛ս Արմ. բառ., Գ, 646—647 և Գ, 319: Գ. Ղափանցյանը (Հայոց լեզվի պատմություն, էջ 180—181) խուղ, հիւղ... կապում է խեթ. hila կամ hēla- բառի հետ, որ սկզբում ունեցել է «տուն» որոշիչը (զոմինանտը):

34 Սրանց մասին ավելի մանրամասն տես մեր «Մի քանի ստուգաբանություններ» հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես»-ում (1962, № 1):